

ժայիտներու: Ժամանակն է որ հայ հաւաքանութիւնը ի սփիւոս աշխարհի մէկտեղուի, միաւորէ իր բարոյական ու հոգեւոր ուժերը և աշխատի ի բարգաւաճումն եւ ի բարեզարդումն իր մայրենի երկրին եւ ժողովուրդին: Մեր հէֆ ու դժբախտ նահատակները վրէժ կը պահանջեն: Հայութիւնը իր մեծագոյն վրիժառութիւնը կատարած է արդէն: Վկայ՝ մեր գոյութիւնը եւ դեռ մեր գոյութիւնը շարունակելու, ինչպէս նաև՝ անելու, զարգանալու եւ ուռնանալու պոլպատեայ կամքը եւ վճռականութիւնը: Ոչինչ պիտի կասեցնէ մեզ յառաջ ընթանալէ: Ոչինչ պիտի խախտէ մեր յառաջխաղացութեան բափը: Հայութեան երբը յաւիտենական է:

Նահատակներուն ճայնը մեր մէջ անմար է: Աղքատ է ու ապերախտ այն

ժողովուրդը որ իր նահատակները չի նանջնար, չի յարգեր եւ չի յիշեր: Երանի այն ժողովուրդին որ իր սրտին մէկ անկիւնը, չերմ տեղ յատկացուցած է իր ազգի անմեղ զոհերուն՝ վասն զի այդ ազգը բարոյական վսեմագոյն դասը առած է կեամի:

Ապրիլ 24' համազգային սուզի ու անմեռ նահատակաց յիշատակութեան օրը, բող ըլլայ ուխտի վերանորդութեան ու աղօրժի վերառաքման օր: Թող ամէն հայ անհատ խոնարհի անգերեզման ու անշիրիմ նահատակներուն առջեւ եւ անոնց խունկի ու սիրոյ բուրումնաւէտ խորանը զարդարէ մրմունց մ'աղօրժով ու սաղմոսով:

Ականաւոր գրող մը ըսածէ. «Այն ժողովուրդը որ չի մոռնար իր նահատակները, չի կրնար մեռնիլ»:

ԶԵՆՈԲ ՔՀՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԻՈՐԱՆՔ

Ա. Զատկուան առիթով, շնորհաւորանքի գիրեր եւ հեռագրեր առափուեցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրերը ստացած է Պատրիարք Սրբազն Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ա. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կարողիկոսին.

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ա. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կարողիկոսին.

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մութափեան Սրբազն Պատրիարքին.

- Մուկուայի եւ Ռուսիոյ Օրբոսուն Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալեքսէ Բ. Սրբազն Պատրիարքին.

- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն.

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄՎՅՐ ԹԹՈՌ Ս. ԷՉՄԻԱՅԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 401

Սուրբ Զատիկ, 2003թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ ՄԱՍՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղեմ, Խորայիլ

Ամենապատիվ Սրբազն Պատրիարք,

Մայր Արքո Սուրբ Էջմիածնից Մեր սիրո ողջուններն ենք հրում Ձեզ, Տիրախնամ Արոռիդ ովտապահ հոգևորականաց, Եկեղեցական և համայքային վարչությանց պատվարժան անդամներին ու բարեպաշտ հավատացյալներին և նորիհավորում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության հրաշափառ տոնի առիթով:

«Յարեաւ Քրիստոս ի նորափոր ի վիմեն» հաղթական օրիներգությամբ հոգևոր գարուն է բացվել քրիստոնյաներիս կյանքում: Հարության սրբարար շնչի հետ մեր հոգիները հաճակված են Աստվածակառույց Սուրբ Էջմիածնի 1700 ամյակի հոբելյանի տոնակատարման խանդավառությամբ ու ոգևորությամբ, որ զորություն և լավատեսություն պիտի դառնան ազգային-Եկեղեցական մեր կյանքից ներս:

Սահիկան դեմ կյանքի հաղթությամբ գտնեպնդված՝ հավատում ենք, որ «քազարորեսց Տեր արդարութեամբ և սիրով իւրով յախտենից մինչեւ յախտեան», և մարդկության կյանքից խապառ պիտի մերժվեն չարությունն ու բռնությունը, խարդավանքն ու ատելությունը, պատերազմներն ու արհավիրքները:

Հարուցյալ Փրկչի Էջման Սուրբ Սեղանի առջև առ Աստված աղոքք ենք բարձրացնում վասն Տիրախնամ Արոռիդ և զինվորյալ միարանության հոգևոր վերաբերնության ու հաճապազ բարգավաճման՝ մաղթելով Ձեզ քաջառողջ արկատ կյանք և Տիրոջ օգնականությունը՝ Պատրիարքական բարձր Ձեր առաքելության մեջ:

Թող Ամենակալ Աստծո օրինության ներք միշտ շեն ու ծաղկուն լինի Եկեղեցին Հայաստանյայց՝ նվիրապետական իր Արոռներով, ովտապահ իր Եկեղեցականներով՝ ու ոչիսարհասիյուտ բարեպաշտ իր գալիսկներով:

Քրիստոս Յարեաւ ի մեռելոց,
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Եղբայրական սիրո ողջունիվ,
աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ, Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԿԱՌՈՂԻԿՈՍՍՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻւրիստ - ԼԻԳԱՆԱՆ

63/03

Ա. Զատիկ, 20:

ԽԵՐԲԻԼԻԱՆ,

Ի՞նչ

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպօլի Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղեմի
Երուսաղեմ.

Սիլևստր Եղբայր ի Քրիստոս,

Տեսոն մերոյ Ցիսուսի Քրիստոս։ Յարութեան խորհուրդով լեցուն այս օրերուն, եղբայրական ոգիով եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Զերդ Սիրելուրիւնը եւ Մրրոց Յակոբեանց ուխտեալ միարանութիւնը։

Այս օրերուն, երբ կը պատրաստուինք դիմաւորելու մեր Տիրոջ Ցիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, աշխարհը ամրող ու յատկապէս Միշին Արեւելյը կ'ապրի անապահովութեան ու պատերազմի արհաւիրէք։ Իրերու այս դրութեան մէջ, խաղաղութեան կը ցանկայ համայն մարդկութիւնը։ Քրիստոնէական Խաւառով ու Յարութեան յոյսով զինուած քրիստոնեաներս համոզուած ենք, սակայն, որ պատերազմը տեղի կու տայ խաղաղութեան դիմաց՝ երբ արդարութիւնը տիրապետ։

Արդարեւ, Քրիստոս ինք ո՛չ միայն արդարութիւն ու խաղաղութիւն քերաւ աշխարհին, այլ "երանի" տուաւ խաղաղարարեաներուն։ Այլ խօսքով՝ յանձնառու դարձուց մարդը շարունակելու եր քերած երկնային խաղաղութիւնը աշխարհի վրայ կենսագործելու ստամելութիւնը։ Արդ, իւրաքանչիւր քրիստոնեայ ու մանաւանդ Քրիստոսի եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած հոգեւոր սպասաւոր կոչուած է առաքեալլ դառնալու խաղաղութեան, որպէսզի վերջ գտնեն պատերազմ-ները եւ բացուի արդարութիւն ու խաղաղութեան արշալոյսը։

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնի այս խնկարոյր օրերուն, մեր աղօրքն է առ Ամենաարարին Աստուած, որ Զերդ Ամենապատութեան պարզեւէ ժաշառողջաւթիւն եւ աննկուն կամք, որպէսզի վերանորոգ հաւատնով յառաւանիք երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան եկեղեցաշէն ծառայութիւնները մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին։

Եղբայրական ջերմ սիրով,

Աղօրակից
Աղօրակից

Ա. ԿԱՐՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ստանպուլ, 19 Ապրիլ 2003

Նորին Շնորհագարդ եւ Ամենապատիւ Տերութիւն
ՏԵՐ ԹՈՐԳՈՍ Բ
Դայ Պատրիարք Սբ. Երուսաղեմի

Ամենապատիւ Դայը,

«Առանց խորութեան, բոլոր անոնք որոնք Քրիստոս Յիսուսի կը հաւատան, Աստուծոյ առջեւ կ'արդարանան: Արդարեւ, թէպէս բոլոր մարդիկ մեղանչեցին եւ Աստուծոյ փառքէն զրկուած կը մնան, սակայն Աստուած զանոնք կ'արդարացնէ իր ծրիօթն պարզեւած շնորհքովը, Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցաւ: Որովհետեւ Աստուած նախասահմանեց, որ Քրիստոս իր թափած արիւնով քաւութեան միջոց ըլլայ անոնց՝ որոնք իրեն կը հաւատան: Անցեալին մէջ Աստուած իր արդարութիւնը ցոյց կու տար՝ անյիշաչար գտնուելով մարդոց գործած մեղքերուն հանդէպ, իսկ ներկայիս, նոյն իր արդարութիւնը կը յայտնէ՝ մեղքերուն թողութիւն շնորհելով, ցոյց տալով թէ արդար է ինք եւ կ'արդարացնէ ունետ մեկը որ Քրիստոսի կը հաւատայ.» (Յոն. Գ.21-26):

Պօղոս Առաքեալի սոյն հաւաստման կը հետեւի Նարեկի սրբատուն մոնողոնը Սուրբ Գրիգոր, իր Ողբերգութեան Մատեանին մէջ արձագանգելով, թէ «Արդարն եւ անարատն, գտիչն ամենային, վասն մեղաց մերոց մատնեցաւ եւ ՅԱՐԵԱՌ ՎԱՍ ՉՈԵԶ ԱՐԴԱՐԱՑՈՒՑՍՆԵԼՈՅ» (Բան Լ.Գ.դ.):


Ս. Նարեկացիի աղօթքը մե՛րը կ'ընենք ամեն անգամ երբ կը հաղորդուինք Ս. Պատարագի խորհուրդով, միանգամայն ամրապնդուելով մե՛ր Յարութեան յոյսին մէջ:

Սուրբ Չատկի հրաշանորոգ օրերուն, այսպիսի խոհերով թարմացած, կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած Ձեր Ամենապատուութեան պարզեւէ քաջառողջ եւ երկար կեանք, բազմամեայ եւ արեւշատ զահակալութիւն, ինչպէս նաև արգասաբեր առաքելութիւն եւ մշտանորոգ ծաղկում Ս. Աթոռոյդ Միաբանութեան:

Այսու գրիւ Ձերդ Ամենապատուութեան կը փոխանցենք նաև Պատրիարքական Աթոռոյս միաբաններուն, խորհրդականներուն, ազգային-եկեղեցական վարչութեանց եւ հաւատացեալ ժողովուրդի սիրոյն եւ ակնածանաց հաւաստիքը:

Մատչիմք խոնարի աղօթակցութեամբ եւ ողջունի սիրոյ, սրտագինս աւետելով, թէ

Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրինեալ է յարութիւնն Քրիստոսի:



Տիգրան Առաքեալ

ՔՄԵՍՐՈՊ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԱՆՈՒԹՈՒՆԸ



**Патриарх
Московский
и всея Руси**

119034 Москва, Чистый пер., 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

Ваше Блаженство!

Христос Воскресе!

В этот светлый день примите поздравления с праздником Святой Пасхи.

С верой во Христа Воскресшего мы обращаем взоры в наше небесное отечество. Распинаясь со Христом через несение креста и умирание для греха, мы воскресаем с Ним для новой жизни, познавая «Его, и силу воскресения Его, и участие в страданиях Его, сообразуясь смерти Его, чтобы достигнуть воскресения мертвых» (Флп. 3, 10-11).

Поздравляя Вас с праздником Воскресения Христова, желаю Вам и Вашей пастве радости о Господе нашем, Который «воскрес из мертвых славою Отца», чтобы «и нам ходить в обновленной жизни» (Рим. 6, 4).

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова
2003 года
Москва